

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 933-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2019 թվականի № - Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N
933-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Կառավարությունը *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 933-Լ որոշմամբ հաստատված հավելված 2-րդ կետի՝

1) «ԺԱՄԿԵՏԸ» սյունակում «2018 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ՐԴ ՏԱՍՆՕՐՅԱԿ» բառերը փոխարինել «2020 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 3-ՐԴ ՏԱՍՆՕՐՅԱԿ» բառերով,

2) «ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ» սյունակի «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ» բառերով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: